ՆՈՐ ՆՅՈՒԹԵՐ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ-ՀԱՄԱԶԱՍՊՅԱՆ ԻՇԽԱՆԱԿԱՆ ՏԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

Արշակունյաց և մարզպանական Հայաստանում Մամիկոնյան իշխանական տունը եղել է ամենանշանավորներից։ Անընդհատ գտնվելով պատմական իրադարձությունների կենտրոնում, այդ տոհմի ներկայացուցիչները խոշոր դեր են խաղացել ժամանակի հայ իրականության մեջ։

Մամիկոնյանների տիրույթներն ընդգրկել են պատմական Հայաստանի տարբեր շրջանները՝ Տարոնը, Տայքը, Բագրևանդը և ըստ այդմ էլ հիշյալ տարածքներում իշխել են այդ իշխանական տան տարբեր ճյուղավորումները։ VIII դ. վերջում Տարոնի Մամիկոնյաններն աստիճանաբար հեռանում են քաղաքական ասպարեզից, ինչին նպաստում է նրանց գլխավորած 774—776 թթ. հակաարաբական ապստամբության ճնշումը։ 776 թ. Արծնի ճակատամարտում Մուշեղ և Սամվել Մամիկոնյանների զոհվելուց հետո[1], տոհմի մյուս ներկայացուցիչների մեծ մասը տեղափոխվում է Բյուզանդիա[2]։

Այդ իրադարձություններից հետո Մամիկոնյանների հինավուրց Տարոն գավառը Բագրատունյաց իշխանների տիրույթն է դառնում, իսկ Աշոտ Մսակերի (806/7—825/6) և նրա որդի Բագրատի օրոք՝ նստավայրը[3]։

Սակայն ամբողջ Տարոնը չէր, որ անցավ Բագրատունիներին։ Նրա լեռնային մի հատվածում գեռ երկար ժամանակ գոյատևեց Մամիկոնյան տոհմի հայրենասեր ըմբոստ ոգին ի դեմս Սասունի Մամիկոնյանների, կամ ինչպես նրանք հայտնի են մեր պատմության մեջ՝ Թոռնիկյանների։

Սասունի Մամիկոնյան-Թոռնիկյանների դերն առանձնապես զգալի դարձավ XI—XII դդ., երբ նրանք Տարոնի Բագրատունիների անկումից հետո դիմակայում էին սելջուկների և հարևան Մրվանյանների ոտնձգություններին[4]։ Հետագայում այս իշխանական տան վերջին ներկայացուցիչ Շահնշահը պարտություն կրելով Շահի Արմեն Բեկթամուրի դեմ մղած կռիվներում, անցավ Կիլիկիա։ Այստեղ Լևոն II թագավորը նրան հանձնեց Սելևկիա, իսկ Շահնշահի եղբայր Վասիլին՝ Միս քաղաքը[5]։

Մոտավորապես նման ճակատագիր ունեցան նաև Տայքի Մամիկոնյանները։ VIII դ. վերջում Տայքում հաստատվում է Բագրատունյաց իշխանական տան մի ճյուղը։ Սակայն այստեղ նույնպես, ինչպես Տարոնում, հին իշխանական տունը լրիվ չի հեռանում ասպարեզից, այլ պարփակվելով համեմատաբար փոքր աշխարհագրական տարածքում, նոր զարգացում է ապրում։

---

1 Ս. Տ. Մելիք-Բախշյան, Հայաստանը VII—IX դարերում, Երևան, 1968, էջ 336։

2 Նույն տեղում, էջ 338։

3 «Հայ ժողովրդի պատմություն», հ. III, Երևան, 1976, էջ 83։

4 Նույն տեղում, էջ 483։

5 Վ. Պետոյան, Սասունի Թոռնիկյան իշխանությունը (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», հաս. գիտ., 1955, № 2, էջ 39)։

Ուշագրավ է, որ Տայքում ևս Մամիկոնյանները հանդես են գալիս Թոռնիկյան անվանումով։ Սա վկայում է, որ և՛ Սասունի, և՛ Տայքի Թոռնիկյանները միևնույն իշխանական տան ճյուղավորումներն են եղել[6]։ Տայքի Թոռնիկյանների իշխանությունն ընդգրկում էր նահանգի Ասյաց փոր գավառը։ Նրանց աշխարհիկ կենտրոնն էր Բերդագրակ ամրոցը, իսկ հոգևորը՝ Զորդվանքը[7]։

Հայտնի է, որ X դ. առաջին կեսում Տայքում առաջացել էր կուրապաղատություն, որը զբաղեցնում էր Տայքի մեծ մասը[8]։ Հետագայում նրանց ու Թոռնիկյանների միջև սերտ համագործակցություն է ստեղծվում[9]։

Առայժմ հնարավոր չէ ճշտությամբ որոշել, թե Թոռնիկյանների իշխանությունը որքան ժամանակ է գոյատևել Տայքում։

Որպես Բյուզանդական կայսրության պաշտոնյաների, XI—XII դդ. բազմաթիվ Թոռնիկյանների հիշատակումը թույլ է տալիս ենթադրելու, որ այդ իշխանական տան ներկայացուցիչներն ամբողջովին կամ մասամբ տեղափոխվել են Բյուզանդիա։

Մամիկոնյանների մեկ այլ ճյուղի հանդիպում ենք հյուսիս-արևելյան Հայաստանում, սակայն ավելի ուշ՝ XII—XIV դդ.։ Սրանք մեր պատմության մեջ հայտնի են Համազասպյան անվանումով։ Նրանց իշխանության աշխարհիկ կենտրոնն էր Գուգարքի Տաշիր գավառի Դսեղ գյուղը, իսկ հոգևոր կենտրոնը՝ Բարձրաքաշ ս. Գրիգոր վանքը։

Մամիկոնյան-Համազասպյանների Դսեղ տեղափոխվելու ուղիների և ժամանակի պարզաբանումը, ինչպես նաև այն հարցը, թե Մամիկոնյանների որ ճյուղից են նրանք սերում, մեծ կարևորություն է ներկայացնում։ Ձեռագրական և վիմագրական նյութերը մեզ հնարավորություն են ընձեռում առաջ քաշել այդ հարցերի լուծման երկու վարկած։

Առաջին վարկածի համար հիմք է ծառայել Սանահնի վանքի արձանագրություններից մեկը (1191 թ.), համաձայն որի Դսեղի Համազասպյանները վանքին են նվիրել «զՄանթշա կէսն ի մեր հայրենեացս, ի մեր հողս Տայքս»[10]. Պարզ է, որ 1191 թ. դսեղցի իշխանները Տայքում կալվածքներ են ունեցել։ Ինչու չկարծել, որ Դսեղ տեղափոխված Թոռնիկյանները դեռևս պահպանել էին սեփականատիրական իրավունքները Տայքի իրենց տիրույթների վրա, այսինքն Համազասպյանները սերում են Տայքի Թոռնիկյաններից[11]։

Հանգուցալուծումը, սակայն, պարունակում է որոշ հակասություններ։ Տայքի Թոռնիկյանները կոչվել են նաև Զորտվանելյան (մի քանի ներկայացուցիչներ ունեցել են Զորտվանել անունը), ինչը ըստ Ս. Երեմյանի առաջացել է Տայքի Զորդվանքի անունից[12]։ Ինչպես գիտենք, այս վանքը եղել է քաղկեդոնական վանական հաստատություն և քանի որ այն հանդիսացել է Թոռնիկ-

---

6 Է. Դանիելյան, Թոռնիկյանների քաղաքական դերը X դարի հայ-բյուզանդական հարաբերություններում (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1977, № 10, էջ 66)։

7 Նույն տեղում։

8 «Հայ ժողովրդի պատմություն», հ. III, էջ 108։

9 Է. Դանիելյան, նշվ. հոդվ., էջ 71։

10 «Հայ ժողովրդի պատմություն», հ. III, էջ 107 և նույն էջի ծանոթագրությունը, որտեղ Դսեղի Համազասպյանները համարվում են Թոռնիկյանների մի ճյուղը։

11 Կ. Գ. Ղաֆադարյան, Սանահնի վանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1957, էջ 106, արձ. № 13։

12 Է. Դանիելյան, նշվ. հոդվ., էջ 66։

յանների հոգևոր կենտրոնը, պետք է կարծել, որ տայեցի իշխանները նույնպես քաղկեդոնականներ են եղել։ Սակայն Դսեղում հաստատված Մամիկոնյանները, դատելով նրանց գործունեությունից և թողած վիմագրերից, եղել են լուսավորչականներ։ Անհավանական է կարծել, թե Թոռնիկյանները Լոռի տեղափոխվելով, փոխել են իրենց դավանանքը։ Սակայն հնարավոր է, որ ոչ բոլոր Թոռնիկյաններն էին քաղկեդոնական և Դսեղ տեղափոխվեցին միայն լուսավորչականները։ Պակաս կարևոր հանգամանք չէ նաև այն փաստը, որ դսեղցի իշխանների մեջ բոլորովին չեն հանդիպում Տայքի Մամիկոնյան-Թոռնիկյաններին հատուկ անձնանուններ՝ Թոռնիկ, Զորտվանել, Վիգեն, Շահնշահ և այլն։

Մյուս վարկածի համար հիմք է ծառայել Ղևոնդ պատմիչի երկը։ Նրա աշխատությունում վստահելի տեղեկություններ են պահպանվել 773 թ. Հայաստանում արաբների դեմ ծագած ապստամբության վերաբերյալ, որը գլխավորել է Արտավազդ Մամիկոնյանը։ Նա առերևույթ արաբներին հպատակություն ցույց տալով, իր զորքով գալիս է Դվին. «իբր թէ մարտնչել ընդ թշնամիս նոցա»[13]։ Այստեղից վերցնելով զենք ու զինամթերք նա գնում է Շիրակ և Կումայրի գյուղի մոտ «սպանանէր զհրամանատար հարկին»[14]։ Վերցնելով հարկահանների ձեռքից ամեն ինչ, Արտավազդը իր զորքով և ընտանիքով անցնում է Վրաց աշխարհ. «ընդ նմա ամենայն նախարարք աշխարհիս»[15]։ Պատմիչն այստեղ հավանաբար նկատի ունի Մամիկոնյան տոհմի ազատներին։ Արաբների Մահմեդ զորավարը, որին միացել էին նաև Սմբատ Բագրատունին և այլ նախարարներ, արշավում է Արտավազդի վրա։ Նա ապստամբներին հանդիպելով «յաշխարհին Վրաց ի գաւառին որ կոչի Սամցխէ»[16] պարտության է մատնում և «ըզնոսա վարեալ փախստական առնէր յաշխարհէս Հայոց»[17]։ «Իսկ նոքա,— շարունակում է պատմիչը,— երթեալ պատսպարէին յաշխարհին Եգերացւոյ և ստանայր (Արտավազդ—Դ. Ս.) անձամբ զիշխանութիւն անձին իւրոյ ի վերայ Եգերացւոց և ի վերայ Վէռիոյ, որ են Վիրք»[18]։

Ղևոնդի հաղորդումից երևում է, որ Արտավազդ Մամիկոնյանը Եգերների երկրում ունեցել է իր իշխանությունը։ Պատմիչի մեկ այլ վկայությունից իմանում ենք, որ Լևոն կայսեր դեմ արաբների սանձազերծած պատերազմի ժամանակ բյուզանդական զորքերի հրամանատարներից մեկն էր «Արտաւազդ ի տանէ Մամիկոնեանց»[19]։ Եզերքում առաջացած այս հայկական իշխանության մասին այլ հիշատակություններ չկան և այդ պատճառով էլ անհնար է ճշտորեն որոշել, թե որքան է այն գոյատևել և ինչ վախճան է ունեցել։

Մեր առաջարկած երկրորդ վարկածի ենթադրական հետևությունն այն է, որ Դսեղ տեղափոխված Մամիկոնյանները կարող էին լինել հենց այս Արտավազդի սերունդները, որոնք որոշ ժամանակ իշխելով իրենց նոր տիրույթնե-

---

13 «Պատմութիւն Ղեւոնդեայ Մեծի վարդապետի Հայոց», Ս. Պետերբուրգ, 1887, էջ 138։

14 Նույն տեղում։

15 Նույն տեղում։

16 Նույն տեղում։

17 Նույն տեղում։

18 Նույն տեղում, էջ 138—139։

19 Նույն տեղում, էջ 155։

ում, անցնում են հյուսիս-արևելյան Հայաստան և բնակություն հաստատում Դսեղում։ Դա կարող էր տեղի ունենալ IX կամ X դդ., քանի որ արդեն XI դ. Դսեղում գոյություն է ունեցել մի եկեղեցի, որի արևելյան պատին քանդակվել է Մամիկոնյան զինանշանը՝ դառ բռնած թևատարած արծիվ։

Ինչպես տեսնում ենք, Դսեղում Մամիկոնյանների հաստատման ժամանակի և հանգամանքների հարցը կարոտ է ավելի հավաստի տեղեկությունների, որոնք առայժմ բացակայում են։ Առաջարկելով վերոնշյալ վարկածները, մենք ցանկացանք ներկայացնել այն փաստերը, որոնց միջոցով հետագայում հնարավոր կլինի ավելի ճշմարտացի լուծումներ առաջարկել։

Դսեղի Համազասպյան-Մամիկոնյան իշխանական տան պատմության ուսումնասիրումը կարևոր նշանակություն ունի XII—XIV դդ. Հայաստանի քաղաքական, հասարակական-տնտեսական և մշակութային կյանքին վերաբերող տարբեր հարցերի լուսաբանման գործում։ Հետևաբար, այդ տոհմի վերաբերյալ յուրաքանչյուր լրացուցիչ հիշատակություն կարող է է՛լ ավելի ամբողջացնել մեր պատկերացումները նրա մասին։

Սանահնի 1191, 1215 և Մղարդի 1201 թթ. արձանագրություններում հիշատակվում է այդ իշխանական տան հավանական հիմնադիր Համազասպ մարզպանի թոռ Սարգիս Մամիկոնյանը, որն ըստ վիմագրագետ Ա. Շահինյանի մահացել է 1201 թ.[20]։ Խնդրո առարկա իշխանական տան պատմությամբ զբաղվող մասնագետները Սարգսի զավակների թիվը նշում են չորս[21]։ Դրանք են՝ Մարծպանը, Սմբատը, Մամնան և Ռուզուքանը։ Մեր պրպտումները ցույց տվեցին, որ Սարգիսը ունեցել է ևս մեկ որդի՝ Համազասպ անունով։

Սանահնի Քոթուկում պահպանվել է մի ուշագրավ վավերագիր-հրովարտակ, հրապարակված 1214 թ.՝ Զաքարյանների կողմից։ Այն հաստատողների կամ վկաների մեջ առաջինը հիշատակվում է. «մանտատուրթուխուցես Հ(ա)մ(ա)զ(ա)սպ որդի Սարգսի տ(է)րս Աղէկու վկայ պարոն Շահանշահի հրամանացս»[22]։ Կարծում ենք, որ այստեղ հիշատակված Սարգիսը մեզ հայտ-

---

20 Ա. Շահինյան, Մամիկոնյան-Համազասպյան տոհմը Հյուսիսային Հայաստանում XII—XIII դարերում (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1966, № 3, էջ 92)։

21 Հ. Քյուրտյան, Դսեղի կամ Համազասպյան Մամիկոնյաններու տունը («Սիոն», 1970, № 3—4, էջ 177, հավելված)։ Եթե իր նախորդ հոդվածներում («Բազմավեպ», 1956, հունիս—օգոստոս, «Հասկ», 1964, № 6—7) Հ. Քյուրդյանը Սարգիս Համազասպյանի որդիներ է համարում միայն Մարծպան և Սմբատ Մամիկոնյաններին, ապա հետագայում՝ ձեռքի տակ ունենալով Ա. Շահինյանի վերոհիշյալ հոդվածը, երկու որդիներին ավելացնում է նրանց քույրերին՝ Մամնային ու Ռուզուքանին, որոնք հիշատակվում էին Մղարդի արձանագրության մեջ։ Այս վիմագրում նշվում է նաև Սարգիս Համազասպյանի կողակիցը՝ Աղուտը, որը գյուղի տարածքում գտնվող Արլագասանց հողերից 25 օրավար նվիրել է Սանահնի վանքին։ Սանահնի արձանագրություններից մեզ հայտնի է, որ Սարգիսը, ինչպես վերևում նշեցինք, ունեցել է նաև երկու որդի՝ Մարծպան և Սմբատ, որոնց մայր է հիշատակված Սիթին (Կ. Գ. Ղաֆադարյան, նշվ. աշխ., էջ 128)։ Այստեղ առկա հակասության իր լուծումն է առաջարկում Հ. Քյուրդյանը, գրելով. «Մենք շատ հավանական կնկատենք, որ Սարգիս Ա ունեցած է նաև Սթե (ուղիղ ձևը՝ Սիթի—Գ. Ս.) անուն կին, որմե ծնած են Սմբատ և Մարծպան (Ա)։ Հետո կերևի Սթե մահացած ըլլալով Սարգիս Ա ամուսնացած է Աղուտին հետ, որմե ունեցած է «Մամնա» (հարցական) և Ռուզուքան (ամուսինը՝ Միրիան)» (Հ. Քյուրտյան, Դիտողություններ «Մամիկոնյան-Համազասպյան տոհմը Հյուսիսային Հայաստանում XII—XIII դարերում» հոդվածի մասին» (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1971, № 5, էջ 94)։

22 Մատենադարան, ձեռ. № 3031, թ. 61։ Այս նույն անձինք ստորագրել են նաև թ. 67-ում գրված հրովարտակի տակ։

նի Սարդիս Մամիկոնյան-Համազասպյանն է, իսկ Համազասպը՝ նրա 5-րդ զավակը։ Դրան հիմք կարող են ծառայել հետևյալ հանգամանքները։ XII դ. երկրորդ կեսում ապրած Սարգիսը կարող էր չափահաս որդի ունենալ XIII դ. առաջին տասնամյակներին։ Տիրույթների տեղագրությունը. մեր կարծիքով նշված Աղէկի (նույնը Աղեգի) բնակավայրը ներկայիս Թումանյանի շրջանի Կարմիր Աղեկ գյուղն է։ Այն գտնվում է Սարգիս Համազասպյանի սեփականությունը հանդիսացող Մղարդ գյուղի հարևանությամբ և մտել է նրա տիրույթների մեջ։ Այս գյուղերի հարևանությունը երևում է նաև Քոթուկի մի վավերագրից, որտեղ հեղինակը խոսելով Սանահնի թեմին ենթակա շրջանների մասին, նշում է. «վաւքայ երկիրդ յԱղէկու Մղարդէ մինչև Տաշրա սինուռն...»[23]. Պակաս կարևոր հանգամանք չէ նաև Համազասպ անվան առկայությունը, որ հատուկ էր Դսեղի Մամիկոնյաններին։

Քոթուկում պահպանված այս հիշատակությունները ցույց են տալիս, թե Համազասպյան-Մամիկոնյաններն ինչպիսի խոշոր դեր են խաղացել Զաքարյանների իշխանապետությունում, ստանձնելով այնպիսի կարևոր պաշտոն, որպիսին է մանդատուրթուխուցեսությունը։ Վստահորեն կարելի է նշել, որ Համազասպը այդ պաշտոնը վարել է ոչ թե Վրաց արքունիքում, այլ Զաքարյանների իշխանապետությունում։ Վիմագրական և մատենագրական բազմաթիվ վկայություններից պարզ երևում է, որ Զաքարյաններն իրենց իշխանապետությունում հաստատել էին նույն պաշտոնները և գործակալությունները, որոնք գոյություն ունեին վրաց արքունիքում[24]։

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Զաքարյանների հրովարտակի տակ ստորագրելու պատիվը կարող էր վերապահվել միայն իշխանության առավել նշանավոր անձանց, ինչպես նաև մի շարք այլ փաստեր[25], կարող ենք արձանագրել, որ Մամիկոնյան-Համազասպյան իշխանական տունը տվյալ ժամանակաշրջանում հանդիսացել է Հայաստանի աշքի ընկնող տոհմերից մեկը։ Այս կապակցությամբ չենք կարող համաձայնվել Լ. Բաբայանի այն կարծիքի հետ, ըստ որի Մամիկոնյանները Շահուռներցի և Մահևանյան փոքր իշխանական տների հետ միասին համարվում են Պռոշյանների վասալները, այսինքն Զաքարյանների, ինչպես հեղինակն է նշում՝ «արիեր-վասալները»[26]։ Ավելացնենք, որ հրովարտակը ստորագրել է նաև Սարդիս Համազասպյանի մյուս որդին՝ Մարծպան Մամիկոնյանը։

Այս հարցն ուսումնասիրողներից Ա. Շահինյանը Սարդիս Համազասպյա-

---

23 Նույն տեղում, թ. 142։

24 Լ. Հ. Բաբայան, Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմությունը XII—XIV դդ., Երևան, 1964, էջ 64, տե՛ս նաև Հ. Գ. Մարգարյան, Միջֆեոդալական պայքարը Գեորգի III-ի ժամանակ և Քուրդ ամիրապետը (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1975, № 11, էջ 58)։

25 Այստեղ նկատի ունենք Համազասպյանների խնամիական կապերը Հայաստանի առավել աշքի ընկնող իշխանական տների (Զաքարյաններ, Օրբելյաններ, Վաշուտյաններ) հետ, նրանց անհամեմատ ընդարձակ տիրույթների առկայությունը (Դսեղ, Մարց, Քարինջ, Մղարդ, Աղեգի գյուղերը իրենց շրջակայքով, Վեգի գետի վերին հոսանքներում գտնվող տարածքները) և այլն։

26 Լ. Հ. Բաբայան, նշվ. աշխ., էջ 369։

նի որդի Սմբատի զավակներից նշում է միայն Համլիկին[27], իսկ Հ. Քյուրդյանը իր կազմած տոհմածառում հարցականով նշում է նաև Սադունին[28]։

Դսեղի Բարձրաքաշ վանքի Ս. Գրիգոր եկեղեցու արևելյան պատին փորագրված մի արձանագրություն թույլ է տալիս կարծելու, որ Համլիկն իրոք ունեցել է Սադուն անունով եղբայր. «Ես Համլիկ եւ Սադուն կատարեցաք գանդարց ծնողաց մէրոց եւ տուաք զՁորաւուանցոյ կէսն յէկեղեցիս»[29]։ Այստեղ «ծնողաց մէրոց» հատվածը վկայում է նրանց եղբայր լինելը, չնայած դա կարելի է նաև մի փոքր այլ կերպ մեկնաբանել. օրինակ, նրանք կարող էին նվիրատվությունը կատարել յուրաքանչյուրն իր ծնողների հիշատակին։ Սակայն այն, որ նրանք նվիրում են միևնույն տիրույթի կեսը, վկայում է նրանց նույն ընտանիքի անդամներ լինելու իրողությունը։

Այս արձանագրությունն ուրիշ ուշագրավ փաստ էլ է պարունակում։ Եղբայրների նվիրատվության դիմաց եկեղեցին խոստանում է չորս օր պատարագ մատուցել. «:Բ: Նրճսին եւ :Բ: Աղուտին»։ Աղբյուրներում Զաքարյան եղբայրների չորս քույրերից միայն Նրշիսի ամուսնու անունը հայտնի չէ, նշվում է միայն, որ նա Մամիկոնյան-Համազասպյանների հարսն է[30]։ Նրշիս անվան եզակիությունը և ժամանակաշրջանի համապատասխանությունը թույլ են տալիս կարծելու, որ արձանագրության մեջ հիշատակված Նրշիսը Իվանեի և Զաքարեի քույրն է։ Նշանակում է, որ պատարագներից երկուսը հատկացվել է Սադունի կողակից Նրշիսին, իսկ մյուս երկուսը՝ Սադունի և Համլիկի մայր Աղուտին (Համլիկի կնոջ անունը Մամքան էր)։

Ըստ երևույթին Սադունի և Նրշիսի ամուսնական կյանքը կարճ է եղել՝ առաջինի մահվան պատճառով, քանի որ սկսած XIII դ. 20-ական թվականներից Նրշիսը միայնակ է հիշատակվում։ Հետագայում նա ծավալում է բուռն շինարարական գործունեություն և իր մահկանացուն կնքում որպես ճգնավոր[31]։

Մամիկոնյան-Համազասպյաններից են սերել նաև մի քանի հոգևոր գործիչներ։ Բավական է նշել Համազասպ և Ներսես Մամիկոնյաններին, որոնք եղել են Հովհաննավանքի առաջնորդները։ Մամիկոնյանների այս ներկայացուցիչներին պետք է ավելացնել նաև Հաղբատի հռչակավոր առաջնորդ Համազասպ եպիսկոպոսին։ Համազասպի անունով բազմաթիվ արձանագրություններ են մեզ հասել, որոնք պահպանվել են Հաղբատում, Դսեղի Բարձրաքաշ և Քառասնից մանկանց վանքերում և այլուր։ Եթե Հաղբատում նրա անունից կամ նրա անվան հիշատակությամբ գրված արձանագրությունների հարցն ինքնըստինքյան հասկանալի է (որպես վանքի առաջնորդ), ապա Բարձրաքաշ և Քառասնից մանկանց վանքերում փորագրվածները ցույց են տալիս, որ նա սերտ կապերի մեջ է եղել այդ վանական հաստատությունների հետ։ Համազասպը բազմիցս հիշատակվում է նաև իր եղբոր՝ Գրիգորի թողած արձանա-

---

27 Ա. Շահինյան, նշվ. հոդվ., էջ 92։

28 Հ. Քյուրդյան, Դսեղի կամ Համազասպյան Մամիկոնյաններու տունը («Սիոն», 1970, № 3—4, էջ 177, հավելված)։

29 Գ. Սարգսյան, Բարձրաքաշ վանքը և նրա վիմագրությունը («Էջմիածին», 1951, № 9—10, էջ 42)։

30 Այս փաստը նշող բոլոր հեղինակները հենվել են վերոհիշյալ արձանագրության հաղորդման վրա։

31 Կ. Գ. Ղաֆադարյան, նշվ. աշխ., էջ 171, արձ. № 142 բ։

գրություններում։ Այդպիսի արձանագրություններ ավելի հաճախ հանդիպում են Բարձրաքաշում և նրա հարևանությամբ գտնվող Քառասնից մանկանց վանքում, որը կամ Մամիկոնյանների մեկ այլ ինքնուրույն ճյուղին է պատկանել, կամ այլ իշխանական տան, որը հավանաբար վասալական կախման մեջ է եղել Մամիկոնյաններից[32]։ Պայմանականորեն դրանց անվանում ենք Աշոտյաններ (Աշոտ անունը ավելի հաճախ է հանդիպում այդ տոհմում)։

Ամենակարևոր փաստը, որ մեզ հնարավորություն է տալիս Համազասպին համարել Մամիկոնյան, դա նրա եղբայր Գրիգորի արձանագրությունն է՝ գրված 1249 թ. Հաղբատի մեծ գավթի արևելյան կամարի վրա. «ի թ(ու)ի(ս) ՈՂԸ (1249)։ Կամաւն Աստուծոյ, ես Գրիգոր եղբայր տեառրն Համազասպա առաջնորդի սուրբ ուխտիս Հաղբատա, մեծ յուսով ապաւինեցա ի սուրբ նշանս եւ զիմ հոգո բաժին գեղն, որ գանձով գնել էի Թաղիադինին որդեցն ի Սարգսէ զԱկռավաձոր որ կոչի Մամխուտ... :Բ: պատարագ Մամքանա՝ իմ կենակցին և այլն ինձ»[33]։ Այստեղ շատ կարևոր է պատարագների հատկացման բաժինը։ Մարծպան Մամիկոնյանի որդի Գրիգորի այլուստ հանդիպող արձանագրություններից գիտենք, որ նրա կնոջ անունը Մամքան է։ Սույն առհավատչյաները մեզ բերում են այն եզրակացության, որ այստեղ խոսքը վերաբերում է Գրիգոր և նրա եղբայր Համազասպ եպիսկոպոս Մամիկոնյաններին։ Այսպիսով կարող ենք նշել, որ Մարծպան Մամիկոնյանը ունեցել է ոչ թե հինգ, ինչպես ցարդ հայտնի էր, այլ վեց զավակ։

Համազասպը կոչվել է «Անեցի»[34], որն իհարկե պարտադիր կերպով չի վկայում, որ նա ծնվել է Անիում։ Շատ հնարավոր է, որ նա երիտասարդ տարիներին քաղաքամայրում ուսած կամ որևէ վանքի առաջնորդ եղած լինի և այդ պատճառով անվանվի Անեցի (ինչպես գիտենք Վարդան Արևելցին, Կիրակոս Գանձակեցին և ուրիշներ նույնպես ունեցել են այլ անվանումներ)։ Համազասպը եղել է ոչ միայն եկեղեցական խոշոր գործիչ, այլև ծավալել է շինարարական բեղուն գործունեություն։ Հաղբատում նա կառուցել է զանգակատուն, ժամատուն և այլ շինություններ։ Ամենայն հավանականությամբ նա մոտ հարաբերությունների մեջ է եղել Վարդան Արևելցու հետ։ Դատելով հիշատակություններից, Համազասպի խնդրանքով է վերջինս գրել իր «Մեկնութիւն հին կտակարանի» (1261), «Ճառ ս. Գրիգորի» և այլ աշխատություններ[35]։

Վերևում նշեցինք, որ Համազասպ մարզպանի որդի Սմբատն ունեցել է չորս զավակ, որոնցից անդրադարձանք Համազասպին։ Այժմ կխոսենք այդ եղբայրներից Հասանի, նրա որդիների և թոռների մասին, որոնք ըստ երևույթին Մամիկոնյանների մեջ առանձին ճյուղ են կազմել։ Սրանց պայմանականորեն կանվանենք Հասանյաններ։

Հ. Քյուրդյանը գիտական շրջանառության մեջ է դրել խնդրո առարկա հարցի վերաբերյալ մի շատ կարևոր սկզբնաղբյուր։ Դա Չիկագոյի համալսա-

---

32 Հավանաբար այս հանգամանքն է հաշվի առել Ա. Շահինյանը, Աշոտյաններին ընդգրկելով Մամիկոնյանների տոհմածառում։

33 Կ. Գ. Ղաֆադարյան, Հաղբատի վանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1963, էջ 177—178, արձ. № 46։

34 Հ. Աճառյան, Անձնանունների բառարան, հ. Գ, Երևան, 1946, էջ 20։

35 Նույն տեղում։ Տե՛ս նաև «Ծուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանին Մխիթարյանց ի Վիեննա», Կազմեց Հակոբոս Տաշյան, հ. Ա, Վիեննա, 1895, էջ 592։

ռանի հայերեն ձեռագրերից մեկի՝ «Կարմիր ավետարանի», հիշատակարանն է[36]։ Այն գրված է Հասանի որդի Մարծպանի անունից 1237 թ. (Հ. Քյուրդյանը վերջինիս անվանում է Մարծպան Ա՝ Սարդիս Համազասպյանի որդի Մարծպանից տարբերելու համար)։

Ըստ այդ հիշատակարանի, Մարծպանը Շիկաքարի ս. Աստվածածին եկեղեցուն նվիրատվություն է կատարում, որի դիմաց ստանում է չորս պատարագ, մեկը հոր՝ Հասանի, երկուսը մոր՝ Մամախաթունի, վերջինը եղբոր՝ Սևադայի, հիշատակին։

Շիկաքարի ս. Աստվածածին եկեղեցին հայկական աղբյուրներում այլ հիշատակություններ չունի։ Մովսես Կաղանկատվացին խոսելով Առանշահիկ Սահլ Սմբատյանի կողմից IX դ. 30-ական թվականներին արաբական զորքերին պարտության մատնելու մասին, հիշատակում է Շիկաքար տեղանունը, որը գտնվում է Արցախ նահանգի Մեծառանք գավառում[37]։ Բ. Ուլուբաբյանը Շիկաքարը համարում է Սահլի բերդ-ամրոցը և այն տեղադրում ներկայիս Ստեփանակերտի շրջանի Քարագլուխ գյուղի տարածքում[38]։

Հիշատակարանում նշված եկեղեցու և Սահլի բերդ-ամրոցի անվանումների հնչյունական նույնությունը և այդ տեղանվան եզակիությունը թույլ են տալիս ենթադրելու, որ խոսքը միևնույն աշխարհագրական օբյեկտի մասին է[39]։

Այս հարցի վերաբերյալ չափազանց կարևոր տեղեկություններ է պարունակում Խաչենի Կոշիկ անապատի ս. Ստեփանոս եկեղեցու ժողովրդահայաց երեսին փորագրված արձանագրությունը։ Այս արձանագրությունը չնայած իր գրության ձևով մի ամբողջություն է ներկայացնում, իրականում գրված է մի քանի անձանց անունից։

Առաջին տողում վերծանվում է միայն «(Հասան)այ եւ (Մամ)ախաթունին, թոռն...»[40] հատվածը, որը ցույց է տալիս, որ խոսքն այստեղ վերաբերում է հիշյալ անձանց զավակին։ Հաջորդ երեք տողերը շատ են եղծված և ամբողջական միտք չեն ստեղծում։ Հինգերորդ տողն ունի հետևյալ բովանդակությունը. «Խերխան, Մարծպան, Մամիկոն կամեցաք նորոգել զմեր գերեզմանատունս», այնուհետև տառերը ջնջված են, իսկ վերջում պահպանվել են «Ես Խերխանս...» բառերը։

Վերոհիշյալը և արձանագրության հետագա բովանդակությունը ցույց են տալիս, որ այն գրված է, ինչպես վերևում նշեցինք, մի քանի անձանց կողմից՝ առանձին-առանձին։ Եթե արձանագրության սկզբնահատվածի հեղինակը Հասանի և Մամախաթունի զավակն է (հավանաբար Մարծպանը կամ Մամի-

---

36 «Զիքակոյի համալսարանի հայերեն ձեռագիրները», կազմեց Հ. Քյուրտյանը («Սիոն», 1971, № 7—8, էջ 273)։ Տե՛ս նաև „A Catalogue of medieval Armenian manuscripts in the United States by Avedis K. Sanjian, University of California Press Berkey, Lo- Angeles, London, 1976, էջ 234։

37 «Մովսեսի Կաղանկատուացւոյ Պատմութիւն Աղուանից աշխարհի», Թիֆլիս, 1912, էջ 374։

38 Բ. Ա. Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը X—XVI դարերում, Երևան, 1975, էջ 71։

39 Հ. Քյուրդյանը Շիկաքարը վերծանել է Շիկահար, իսկ Ա. Սանջյանը՝ Շիկաքար։ Կարծում ենք, որ վերջինն ավելի հավաստի է։

40 «Դիվան հայ վիմագրության», պրակ V, էջ 31, կազմեց՝ Ս. Գ. Բարխուդարյանը (ձեռագիր)։

կոնը, որովհետև չորս եղբայրներից[41] Խերխանը և Սևադան թողել են իրենց անունով արձանագրությունները), ապա «աջորդ հատվածում» այդ դերով (արձանագրության հեղինակի). հանգես են գալիս երեք եղբայրները, որոնք կամենում են նորոգել իրենց տոհմական տապանատունը։

Ըստ արձանագրության հաջորդ մասի՝ եղբայրներից Խերխանը կառուցել է տեղի ս. Ստեփանոս եկեղեցին և նորոգել «յուսները։ Վերջին՝ ընդարձակ հատվածը պատկանում է Հասանի մյուս որդուն՝ Սևադային, որը եկեղեցուն է նվիրում. «զԳրիգորանանց, զՄորնդանանց, զԳելվարգանց»։ Այստեղ խոսքը կա՞մ վերաբերում է շինական ընտանիքների, կա՞մ նրանց հողերի (գուցե գրիչը մոռացել է «հոդերն» բառը փորագրել) նվիրաավությանը։

Այս նվիրատվությունների դիմաց, որ կատարել էր Սևադան, եկեղեցին պետք է պատարագներ մատուցեր նրա հոր՝ Հասանի, մոր՝ Մամախաթունի, քրոջ՝ Ռուզուքանի և եղբոր՝ Խերխանի հիշատակին։

Վերևում նշված հիշատակարանում և այս արձանագրության մեջ հիշատակված անունների որոշ նույնությունը ակներևաբար ենթադրում է գրանց անմիջական կապը։ Այս երկու աղբյուրներում նշված փաստերը, Մարծպան ու Մամիկոն անունները, թույլ են տալիս կարծելու, որ խոսքը այստեղ Համազասպյան իշխանական տան ներկայացուցիչների և Արցախ-Խաչենում նրանց ունեցած տիրույթների մասին է։ Թե երբ են նրանք տեղափոխվել Խաչեն, կամ ինչպես են ձեռք բերել այդ կալվածքները, առայժմ դժվար է ասել։

Այն իրողությունը, որ Հասանյանները գրեթե ոչ մի հիշատակություն չունեն Դսեղում (միայն Հասանն է հիշվում 1191 թ. Սանահնի մի վիմագրում), վկայում է, որ այդ ճյուղի բաժանումը տեղի է ունեցել բավական վաղ, թերևս հենց Հասան Մամիկոնյանի ժամանակ։

НОВЫЕ МАТЕРИАЛЫ О КНЯЖЕСКОМ ДОМЕ АМАЗАСПЯН-МАМИКОНЯН

ГАГИК САРКИСЯН

Резюме

Исчезнувшие в конце VIII в. с политической арены Мамиконды спустя пять веков вновь появляются в разных районах Армении (Сасун, Тайк, Ташир).

В Ташире с XII в. упоминаются Амазаспиды, являющиеся наследниками прославленного рода Мамиконидов. Вопросы об обстоятельствах и времени переезда Мамиконидов в Ташир по сей день окончательного решения не получили, имеются лишь предположения.

Светская резиденция Амазаспидов находилась в селении Дсех, а духовная — недалеко от села, в монастыре Бардзракаш св. Григор.

У внука основателя этого рода Амазаспа марзпана, Саргиса, было пятеро детей, из коих об Амазаспе в специальной литературе упомина-

41 Սրանց որպես եղբայրներ նշում է նաև Հ. Քյուրդյանը («Դսեղի կամ Համազասպյան Մամիկոնյաններու տոմ՝ը», «Սիոն», 1970, № 3—4, էջ 177, հավելված)։

ется впервые. Он играл видную роль в военной и политической жизни Армении XIII в. Учитывая это, Захариды назначили его своим мандатуртухуцесом.

Из первоисточников не было известно лишь имя мужа одной из дочерей Саргиса Захаряна—Нрджис. Эпиграфические исследования показывают, что она была супругой Садуна—брата Амлика Мамиконяна.

Из рода Амазаспидов происходит известный настоятель Ахбатского монастыря —епископ Амазасп. Он был сыном известного Марцпана Мамиконяна.

В конце XII или начале XIII вв. Амазаспиды, вероятно, приобретают владения также в Хачене, где основывается их новая ветвь. Об этом гласят надпись монастыря Кошик в Хачене и памятная запись рукописи Чикагского университета, написанной в монастыре Шикакар, также находившейся в Хачене.